

19231



1914


= ՏԱՄՆԵՐԿՈՒՅՈՒ =

ՇՐՋԻԱԾ ՆԱԽԻ ՏԱԿ

Թուս. պոխաղը.

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ

Գիմն և 5 կող.



ԱՐԵՎԱՆ

Հայոց Բէհրուդեան փող. № 12.

1914

391.99
գ-91

2003

851.93
գ - 91

ար.

ԹԱՅ ՓՈԽ ՉԱՆՉ

= ՏԱՄՆԵՐԿՈՒԻ ՕՐ =

ՇՐՋԻԱԾ ՆԱԻԻ. ՏԱԿ

Թուա. փոխադր.

ՀՅՈՒԱՐԴԻԱ



ԿՐԵԱԿԱ

Տպարան «Լոյս» Բէքուղեան փող. № 12.
1914

38237 ս.հ.

Այն սոսկալի դէպքը, որ պիտի պատռմեմ, իսկական եղելութիւն է:

Դէպքի հերոսն է նաւապետ Հանս Ինգելանդ, մօտ երեսուն աարեկան մի երիտասարդ:

Նա իրանդտէ փոքրիկ նաւի թէ զեկավարն էր, և թէ տէրը:

Ապրելի 16 ին Էրնդրտէն տախտակով բեռնւած գուրու եկաւ Մեմելից (աբելին Պրուսիայում) դէպի Բըրեմէն:

Նաւի վրայ էնգելանդի ընկերներն էին նրա օգնականը և մի նաւաստի:

Նաւահանգստից դուրս գալիս թեթև քամի էր փշում: Էնգելլանդը դժանից չչփ թւեց. որովհետեւ քամին յաջողակ էր:

Սակայն կէսօրին մօտ նղանակը փոխւեց դէպի վատը: Քամին, քանի գնում, ցրտում էր ու սաստկանում: Երկինքը երբեմն յորդ անձըն էր թափում, երբեմն էլ ձիւն: Ծանրաբեռնւած նաւը հազիւ հաղպահում էր կատաղած ալիքների կատարներին: Հարկաւոր եղաւ ժողովել առազատների մի մասը:

Երեկոյեան ժ. 7-ի մօտերքը բարձրա-



(146)

2464-60

յաւ կատարեալ փոթորիկ. սակայն ամբակազմ նաւը դեռ ջուր չէր քաշում:

Բայց կէս գիշերի դէմ փոթորիկը փոխւեց իսկական մրրկի. փոքրիկ նաւակը քամու ընթացքով սլացաւ ճեպընթաց շողեկառքի արագութեամբ՝ ճայի նման սուզեւելով ալիքների մէջ:

Ալլելի 19.-ի առաւօտեան երեց, որ նաւը կտրել է 120 մզոն:

Ամբողջ այս ժամանակ նաւապետ էնդելլանդը ոչ մի ըոպէ ձեռքից չէր թողնում ղեկը՝ խօսքով և օրինակով խրախուսելով իր փոքրիկ նաւորդախմբակը: Իսկ ինքը մինչև ոսկրները թրջւել էր և այնքան ջարդւել, որ հազիւ էր ոտի վըայ կենում:

Բայց 19.-ի առաւօտը, երբ թւում էր, թէ լուրջ վտանգն արդէն անցել է, նա ղեկի մօտ իր տեղը յանձնեց իր օգնականին, իսկ ինքն իջաւ ներքեն՝ իր նաւասենեակը, որ փոխի թրջւած հագուստն ու սպիտակեղէնը:

Դժբախտաբար՝ հէնց որ նա ներս իջաւ և վրայից դէն ձգեց թաց հագուստը, յանկարծ նրա նաւակը, որ ամբողջ ժամանակ սաստիկ օրօրուում էր, սարսափելի թեքւեց, և նա զգաց, որ սայթաքեց և ուժով շպրըտւեց սենեակի մի անկիւնը:

Ոտի կանգնելով՝ էնդելլանդը սաստիկ չարած շուրջ նայեց: Էս ինչ պատահեց նրան: Նա չէր ճանաչում իր նաւասենեակը: Յանկարծ կայծակի արագութեամբ մի միտք ծագեց նրա զլխում, և նա պարզապէս նկատեց, որ կանգնած է իր նաւասենեակի առաստաղի վրայ, իսկ յատակը գտնւում է այժմ նրա զլխավերելը: Այժմ նա հասկացաւ պատահմունքի պատճառը:— Նրա նաւը շրջւել է յատակն ի վեր, այդ դրութեամբ կանգնել ջրի երեսին. իսկ ինքն այնտեղ բռնւել է՝ ինչպէս մուկը թակարգում՝ դուրս գալու ամեն հնարաւորութիւնից զրկւած:

Այս սոսկալի փաստն սկսեց շուտով հաստատւել:

Նաւի միջի ջուրը, որ այժմ գտնւում էր էնդելլանդի զլխավերելը, ծորում էր նաւասենեակի պատերով, միենոյն ժամանակ ներքենից էլ ջուրն սկսեց ներս հոսել և ծածկել այն, որ առաստաղ էր և այժմ պէտք է կոչւէր նաւասենեակի յատակ:

Նրա օգնականն ու միւս լնկերները հաւանօրէն ծովս էին շպրտւել:

Ով որ լինէր այսպիսի վիճակում, յուս սահատութեան մէջ կընկնէր: Սակայն նաւաստիկ էնդելլանդը չվիատեց և չշփոթւեց:

Նախ և առաջ նա սկսեց, որքան կարելէ էր, վերև բարձրանալ, որ ազատւի ներս հոսող ջրից, որ լցւել էր նաւասենեակը մինչև մի քանի ֆուտ բարձրութեամբ։

Շուտով նա նկատեց, որ ներքեց ջրի հոսանքը դադարեց。—ուրեմն նաւի փայտեղէն բեռը և տակը մնացած օդի որոշ քանակութիւնը չեն թողնիլ, որ նաւը սուզի՝ գունէ մի առ ժամանակ։ Բացի դրանից՝ նաւասենեակի դրսի ջրի մակերևոյթն աւելի բարձր էր, քան ներսինը։

Երջւած նաւակը շարունակ օրօրւում էր փոթորկւած ծովի ալիքների վրայ։ Նաւասենեակում ջուրն այնպէս էր ծփծփում, որ սկսեց քաշել զանազան առարկաներ և մի անկիւնից միւսը շպրտուել։

Էնգելանդը շատ լաւ հասկանում էր, որ եթէ ինքն ընկնի այս ջրի մէջ, կամ կը խեղգւի, կամ կջարդւի այնտեղ լողացող առարկաներից և վերջ ի վերջոյ փշուր-փշուր կինի նաւի կողքերին դարկւելով։

Ուստի ամենից առաջ հոգ տարաւ իր համար թառատեղ շինելու նաւի կողին մօտիկ, ջրից վերև։ Սորա համար նա անասելի նեղութիւններով կարողացաւ մի երկու տախտակ պոկել նաւասենեակի յատակից,

բացւած ճեղքերով բարձրանալ վերև և ապահովւել նաւասենեակը լցւած ջրից։

Հիմա էլ ոկսեց մտածել ուտելիքի պաշարի մասին։ Արդեօք նաւասենեակում ուտելու որևէ բան կմը, թէ ինքը պիտի դատապարտւած լինէր սովամահի։

Տենդոտ շփոթով սկսեց խուզարկել նաւասենեակի ազատ մնացած ամեն մի անկիւնը։

Այդ որոնումը պսակւից ամենահաճելի գիւտով。—այն է՝ երեք փունտ չամիչ, նոյնքան բրինձ, մօտ հինգ փունտ շաքար և մի քիչ էլ կալբաս։

Այս բոլորը նա պահեց մի վստահելի տեղ և բաժանեց ամենաճիշտ մասերի, որքան անհրաժեշտ էր իւրաքանչիւր օր կեանքը պահպանելու համար։ Նա աշխատում էր, որքան հնար է, երկարատև դարձնել այդ աղքատիկ կերպակուրը, որովհետև դժւար էր ասել, թէ որքան ժամանակ էր վիճակւած նրան մնալ այս երկաթի բանտում, մինչև որ կյայտնւէր մահը կամ փրկութիւնը։

Կերպի հարցը որոշելուց յետոյ էնգելանդն սկսեց մտածել, թէ ինչ հնարով իմաց անի անցնող նաւերին իր զարհուրելի դրութեան մասին։

Սակայն այս տեսակէտից «նրա ձեռն
ու ուր կապւած էին»:

Առհասարակ խորտակու ած նաւի տախ-
ակամածի վրայ մարդու դրութիւնն այն-
քան էլ ամտանելի չէ, թէկուզ նաւի բոլոր
կայմերն էլ կորած լինեն: Որովհետեւ այն-
տեղ որեւէ մի բարձրութիւն կգտնի, կամ
հէնց ծայրահեղ դէպքում կարելի է ձեռնե-
րը բարձրացնելով նշան տալ: Բացի դրա-
նից՝ ձայնի հնչիւնն էլ կարող է լուր հաս-
ցնել նրա օրհապական վիճակի մասին:

Իսկ տարաբախտ էնդելլանդը գտնւում
էր շրջապատ նաւի ներսում, նաւակողի եր-
կաթեայ կամարի տակ: Նրա ձայնը չէր կա-
րող գուրս թափանցել, մանաւանդ՝ որ նա-
ւասենեակի ջրի անընդհատ ծփանքը միան-
գամայն խլացնում էր նրան:

Վերջապէս մի անկիւնում բարեբախ-
տաբար նա գտաւ փայտեայ մի ծանր մուրճ,
որով սկսեց ու ժեղ և համաչափ հարւածներ
տանաւակողի երկաթեայ գոտիներին: Վեր-
ջիններս սկսեցին մետադական սուր հնչիւն-
ներ արձակել, որոնցով խեղճ էնդելլանդը
յոյս ունէր մօտից անցնող նաւերի ու շադ-
րութիւնը գրաւել: Թէկ համոզւած էր, որ
այդ հնչիւններն այնքան էլ մեծ տարածու-

թեան վրայ չեն լսւի: Բացի դրանից՝ նա գի-
տէր, որ ծովագնացներն առհասարակ աշխա-
տում են, որքան կարելի է, հեռու փախչել
շրջւած նաւերից և լողացող բեկորներից,
որովհետեւ նրանցից ոչ միայն օդուտ չկայ,
այլ և շատ անգամ մեծամեծ վտանգ է պա-
տահում: Եւ մեմ մտքով կարող էր անցնել,
թէ նաւակողի երկաթեայ զրահի տակ զըտ-
նւում է կենդանի էակ, որ փրկութեան է
սպասում:

Այդ միջոցին խեղճ նաւապետը մօտիկ
ընկած մի լամպ էլ գտաւ: Իր գրպանում
ունէր նաև մի արկղիկ լուցկի: Սակայն էն-
դելլանդը նոյնիսկ մտքով էլ անց չկացըեց
վառել:

Նա զիտէր, որ նաւի տակ օդի պաշա-
րըն այնքան էլ մեծ չպէտքէ լինէր, և լամ-
պը վառէր, թէ չէ, նա կսկսէր արագ կեր-
պով կլանել թթւածինը, իսկ դրա հետեան-
քըն այն կլինէր, որ նա կխեղդէր մինչև
օդնութեան հասնելը, եթէ միայն դա էլ
պատահէր:

Սակայն նա միանգամայն խաւարի մէջ
չէր գտնւում: Ցերեկւայ լուսը ջրի միջով
թափանցում էր նաւասենեակը: Դա լուսնի
աղօտ լուսի նման մի շատ թոյլ փայլ էր.

բայց և այնպէս՝ նրան ընտելանալով՝ էնդէլ-
լանդը գեղեցիկ կերպով կարողանում էր
որոշել շրջապատող բոլոր առարկաները։

Քանի որ երկնքում փայլում էր արեր,
նաւասենեակի մէջ լոյսն աւելի պայծառ
էր լինում. իսկ քանի օրը թեքում էր գէ-
պի երեկոն, այնքան էլ նա աղօտանում էր։

Էնդելանդի հաշւով՝ իր նաւասենեա-
կում համեմատաբար աւելի լոյս էր լինում
առ. ժամի 6-ից մինչև եր. ճ. 6-ը։

Ամբողջ այս 12 ժամւայ ընթացքում՝
ամենակարճ ընդհատումներով՝ նաւապետ
էնդելանդը համարեա անդադար աշխա-
տում էր իր փայտեայ մուրճով՝ խփելով
նաւակողի երկաթեայ գօտիներին։

Համաշափ և ծանրազարկ հարւածներն
ամբողջ օրը տատանում էին նրա բանտի-
ովը, սակայն, ինչպէս երեսում էր, ոչ ոքի
լսելի չէին լինում։

Եւ գիտէ՞ք՝ սա ինչ տաժանակիր և ան-
յոյս աշխատանք էր...

Ի՞նչ սոսկալի մտքեր էին պաշարում
նրա ուղեղն այս երկար և տաղտկալի օրե-
րում։

Միայն մի բան ակներև էր, որ նա
յամառէն հեռացնում էր իրենից մահւան-

մասին մտածողութիւնը։ Ամբողջ ժամանակ
նա՝ առանց ոչնչի վրայ ուշ դարձնելու՝ չէր
դադարում յուսալուց։

Երբ որ գիշերը վրայ էր հասնում, նա-
ւապետը, որքան հնարաւոր էր, տեղաւոր-
ւում էր հին ճօպների և տոպղակների
կոյտի վրայ, ծածկւում էր այդտեղ դրւած
պահեստի առագաստով և քնում էր։

Նա լաւ գիտէր, որ միայն գիշերը կա-
րող էր նրա շրջւած նաւին զարկել ուրիշ
որեւէ նաւ և միանգամից խորասուզել
նրա ապաստանը. բայց նա այն էլ էր իմա-
նում, որ այդպիսի մի պատահարը ոչնչով
չի կարող արգելել — այդ պատճառով էլ
այս անօրինակ մարդն ամեն գիշեր հան-
գիստ կերպով փաթաթւում էր պահեստի
առագաստով և քնում, կամ աւելի ճիշտ՝
մոռացւում էր մի ժամաշափ, որպէսզի մի
վայրկեան զարթնելով և համոզւելով, որ իր
շուրջը ոչ մի փոփոխութիւն չի առաջացել,
նորից նիրհի, ննջի. .

Երկար, ձանձրալի շղթաշարով սահում
էին նրա անմիթար գոյութեան ժամերը...

Նա իր մօտ ժամացոյց չունէր, սա-
կայն նաւասենեակի մէջ ընկնող լուսով ո-
րոշում էր ցերեկն ու գիշերը և իւրաքան-

չիւր նոր օրը մի գծով նշանակում էր
նաւակողի գերաններից մէկի վրայ:

Իհարկէ նա չէր կարող որոշել, թէ ի՞նչ
ուղղութեամբ էր մզում նրա նաւը, բայց
ենթադրում էր, որ նա քշում էր դէպի
Տ. Տ. Ե. այսինքն Հարաւ-Հարաւ-Արևելք:

Գծերի թիւը շարունակ աւելանում էր
գերանի վրայ:

Լոյսը ծագում և հանգչում էր նաւա-
սենեակում: Կերակրի մանրիկ բաժինները
հետզհետէ պակասում և մօտենում էին
սպառման: Սակայն փրկութիւնը դեռ չէր
յայտնւում:

Ինչով պիտի վերջանար այս բոլորը...
Արդեօք նրան վիճակւած էր խեղդւել օդի
բացակայութիւնից, թէ մեռնել քաղցից,
կամ, թերես, անդունդ իջնելիր բանտի հետ
միասին:

Եթէ նրա տեղ մի ուրիշը լինէր այդ-
պիսի անել յուսահատ դշութեան մէջ, հա-
ւանօրէն կզրկէր բանականութիւնից. բայց
այս հասարակ և վարժւած ծովագնացը եր-
բէք չէր կտրում իր յոյսը և շարունակում
էր անգագար ուշխատել իր փայտեայ մուր-
ճով ժամէժամ, օրէցօր, մինչեւ որ մուրճը
ջարգւեց:

Մի օր նա մտածեց, թէ իր վախճանը հա-
սել է: Երկի օրը պայծառ և արկոտ էր:
Նաւակողի կէծացած երկաթներից՝ նաւա-
սենեակի օդն այնպէս էր տապացել, որ էն-
գելլանդը շնչասպառ էր լինում:

Նա սկսեց աւելի ներքեւ իջնել, ջրին
աւելի մօտիկ. սակայն այնտեղ էլ օդը շա-
լաւ չէր. նա դժւարութեամբ էր շունչ քա-
շում, այնպէս, որ նրան սկսեց թւուլ թէ
ահա ամեն ինչ կվերջանայ...

Բայց հէնց այս վայրկենին, երբ նրա
յոյսն սկսեց կտրւել յանկարծ թարմ քամի
բարձրացաւ, ծովս ալեկոծւեց. նաև սկսեց
օրորւել, և միենոյն ժամանակ օդն արագու-
թեամբ մաքրւեց, այնպէս, որ էնգելլանդը
նորից կարողացաւ ազատ շնչել:

Սակայն հիմա էլ նրան սկսեց ծարաւը
տանջել, որովհետև ամեննին ջուր չկար:

Այնտեղ, ներքեւ, ոտքերի տակ ջուր
էր գտնւում—մթին, գրեթէ՝ սև, սառը,
հրապուրիչ ջուր. բայց նա գիտէր, որ այդ
ջրի մի կուժն անգամ սպառնում է նրան
խելագարութիւն կամ մահ:

Կերակրի պաշարն ստուգելով՝ նա տե-
սաւ, որ դա իրան կբաւականացնի երեք
օրից ոչ աւելի, իսկ գերանի վրայ կտրւած-

գծերի թիւն արդէն 12.ի էր հասել Ուրեմ
12 օր նա ապրել էր այս լողացող բանտի
մէջ:

Այսքան ժամանակում անկասկած շատ
նաւերից տեսել էին շըջւած նաւը, բայց
ոչ ոքի մտքով՝ չէր անցել՝ դիտել նրան, ոչ
ոք չէր կամեցել ժամանակ կորցնել և ա-
ւելի մօտիկից ծանօթանալ այս բեկորի
հետ:

Միթէ ոչ ոք չի նայելու այս կողմը:
Միթէ օգնութիւնը երբէք չի գալու:

Էնգելլանդը վճռեց՝ իր պաշարը վերջա-
նալուն պէս՝ մեռնել կեանքի համար կու ե-
լով, այսինքն՝ հագնել այն «փլկարար զօ-
տին», որ կախւած էր նաւասենեակի պա-
տից, ջուրն ընկնել, աշխատել բանալ նա-
ւասենեակի դուռը և դուրս պրծնել խեղ-
դուկ նաւասենեակից դէպի ծովի ալիքները:

Իհարկէ դա մի վտանգաւոր փորհ էր
և հազիւ թէ կարելի լինէր յոյս կապել
գրա յաջողութեանը: Բայց աւելի լաւ չէր
լինի կուի մէջ մեռնել, քան թէ իր երկա-
թեայ վանդակում՝ քաղցից ու ծարաւից:

Հինգշաբթի էր, ամսի 30.ը. օրը թեք-
ւել էր դէպի երեկոն: Զորս կողմն ամեն

ինչ խաղաղ էր, ինչպէս գերեզմանում:

Էնգելլանդն արդէն դադարել էր փայ-
տեայ մրճով նաւակողերին խփելուց և պառ-
կել էր իրանդորր և կոշտ անկողնի վրայ՝
քնելու մտադրութեամբ, որ յանկարծ սըր-
տատը վեր թռաւ...

Այս ինչ ձայն էր.. Զլինի թէ նա
սկսել է իր գատողութիւնը կորցնել ..

Նա վեր թռաւ, ոտի ցատկեց և՝ իր
մուրճը խլելով՝ սկսեց կատաղաբար հարւա-
ծել իր բանտի երկաթեայ կամարներին:

Անցաւ մի ըոպէ. սպանիչ լուռթեան
և ակնկալութեան մի տարի ըոպէ, և, ով
երկինք, գրսից լսւեց պատասխան թըխկոց:

—Ուրեմն հասել է վերջապէս այնքան
երկար սպասած օգնութիւնը...

Էնգելլանդն աղատ շունչ քաշեց և ցան-
կացաւ իմանալ, թէ ովքե՞ր են իր փրկիչ-
ները...

Բայց չնայելով, որ խեղճ բանտարկեա-
լին միայն մի բարակ երկաթի թերթ էր
բաժանում իր փրկիչներից, այնուամենայ-
նիւ իրար հետ մի որևէ յարաբերութիւն
չափազանց գժւար էր:

Մի թերթ պոկելու բոլոր ջանքերն ի-
դուր անցան: Երկար աշխատանք թափելուց

յետոյ վերջապէս կարելի եղաւ միայն թուլացնել պտուտափակներից (բայրա) մէկը՝ թերթերի մէջ ճեղք բանալ, որով հնարաւոր եղաւ խօսել:

Էնգելլանդն իմացաւ, որ իր փրկիչներին Նորվեգիական Աւրօրա նաւի նաւապետ Զէրէնօէնի օգնականը և երկու նաւաստի Շրջւած նաւը նրանք տեսել էին Բիկուն Փափից 16 մղոնի վրայ, և նաւապետն իսկոյն հրամայել էր՝ նաւակ իջեցնել և գնալ, դիտել նրան:

Նաւասենեակի մէջ ճնշւած օգն այս խօսակցութեան ամբողջ ընթացքում զարհուրելի արագութեամբ դուրս էր հոսում պտուտակի ճեղքից:

Էնգելլանդը՝ վախենալով, որ նաւասենեակի ամբողջ օգը դուրս գալով նրանաւն էլ կարող է սուզել, ինդրեց իր փրկիչներին շուտով փակել այդ ճեղքը և պարանով կապելով նրանաւը՝ քաշել մօտիկ նաւահանգիստը:

Նաւապետի օգնականն ու նաւաստիներն շտապեցին կատարել նրա ցանկութիւնը և վերադառնալով իրենց նաւակն՝ սկսեցին քաշ տալ շրջւած նաւը դէպի Աւրօրա:

Աւրօրան քաշ տեց իր սոսկալի աւա-

րը դէպի Նէյֆարվասեր Դանցիկ քաղաքի նաւահանգիստը:

Եւ որովհետեւ այն լուրը, թէ շրջւած նաւի տակ կենդանի մարդ է գտնւում, կայդակի արագութեամբ տարածւել էր քաղաքում, ուստի հետաքրիբների ահազին բազմութիւն սկսեց թափւել դէպի նաւաշինարան (ՃՕԲ), որ ներկայ լինեն այն մարդու ազատման, որը մօտ երկու շաբաթ ապրել էր շրջւած նաւի տակ.

Նաւաշինարանում շրջւած նաւը ձգեցին մեծ վելքնանի տակ (ՃՈՐԿ ֆալ), նաւակի տակով անց կացրին պարաներ և շրջաներ և բարձրացրին այնքան, որ չսուզելի Ապա նաւային դարբինները դործի կպան, որ նաւակողի երկաթեայ թերթերից մէկը կտրեն: Դրա համար նրանք ամենից առաջ մի ծակ բաց արին, որով իսկոյն դուրս ցցւեցին ինգելլանդի մատները:

Թշւառ բանտարկեալն զգուշացրեց դարբիններին, թէ այդ անցքով կարող է օղը դուրս հոսել և նաւը սուզել: Սակայն նրան հանգստացրին, որ նրա նաւը կախւած է վերհանից և միանգամայն ապահով:

Մարդիկ աշխատում էին կրկնապատիկ եռանդով՝ խրախուսւած այն ցաւակցու-



թեամբ, որ տածում էին դէպի խեղճ բանագիեալը:

Բայց՝ հակառակն ըանց բոլոր ջանքերին՝
այս աշխատանքը տևեց մօտ 5 ժամ:

Միայն եր. 9 ժ. 45 բոպէին երկաթի
թերթը պոկւեց, և նաւապետ էնգելանդին
զգուշութեամբ դուրս հանեցին իր լողացող
բանտից, որտեղ նա անց էր կացրել 11 օր
18 ժամ:

Նա իսկոյն ենթարկւեց բժշկական ման-
րազնին դիտողութեան, և՝ ի գարմացումն
ամենքի՝ բժիշկները գտան, որ նա բոլորու-
մին չի վասաւել այս սարսափելի արկածից,
չնայելով որ ծարաւից զրեթէ մեռնում էր.
որովհետեւ չէր կարողացել համբերել և մէ
քանի կում ծովային ջուր էր խմել:

Բացի դրանից՝ նրա ձեռները կոշտերով
ծածկւած էին՝ փայտեայ մուըճով ան-
դադար աշխատելուց, իսկ ինքը փոքր ինչ
գունատւել էր երկար բանտարկութիւնից:
Բայց ընդհանրապէս նա բոլորովին առողջ
էր և իրեն այնքան լաւ էր զգում, որ՝ ա-
ռանց կողմանակի օգնութեան՝ կարողացաւ
անձամբ հասնել ծովափին, որտեղ և կառք
նստեց:

Սակայն աւելի տարօրինակն այն է, որ

այս անվրդով մարդն ամենակարճ ժամանա-
կից յետոյ պատրաստւում է հրամանատա-
րութիւն ստանձնել այն գեղեցիկ երկկայմ
նաւի, որը նրա համար շինւում է, իսկ մին-
չեւ այդ ժամանակ՝ լընդուհան արդէն նորից
պատրաստւում է ծով դուրս գալ նախկին
վարիչ և տէր էնգելանդի հրամանատարու-
թեան տակ:

Ահա թէ ինչպէս պիտի վարւի քաջ
մարդը՝ կեանքի ամեն տեսակ փորձանքնե-
րի ժամանակ:



111111. 01. 1911

01. 1911. 01. 1911
02. 1911. 01. 1911
03. 1911. 01. 1911
04. 1911. 01. 1911

05. 1911. 01. 1911

19231

ՀՈՅՍ ԵՎ ՏԵՍԱԼ.

1. Զար կանանց ծագումը 10 կ.
2. Զեները մնց են բուսնում
(Կատակերգ. 3 դորձ.) 30 ,
3. Տասներկու օր շրջւած նաւի տակ 5 ,
4. Սպանւածի հետ մի գերեզմանում 10 ,

Հեղինակի հասցէն՝ Ֆրիվան. — Կոման

2013

